Հավելված

Խաչատուր Աբովյանի անվան հայկական

պետական մանկավարժական համալսարանի

գիտական խորհրդի 2025 թվականի փետրվարի 28-ի թիվ 4 նիստի

Խորհրդի նախագահ՝ Ս.Գևորգյան

ԿԱՐԳ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն Կարգը սահմանում է «Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամում (այսուհետև՝ ՀՊՄՀ) մագիստրոսների ավարտական որակավորման աշխատանքը (այսուհետև՝ մագիստրոսական թեզ), մագիստրոսական թեզի թեմայի ընտրության, հաստատման, պատրաստման, ղեկավարման, պաշտպանության, գնահատման ընթացակարգը, բովանդակությունն ու կառուցվածքը, ձևավորման պահանջները, ըստ ուսումնական կիսամյակների կատարվելիք աշխատանքների բովանդակությունը, մագիստրոսի ատեստավորման կարգը:

2. ՀՊՄՀ-ում մագիստրոսի ամփոփիչ ավարտական որակավորումն իրականացվում է «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ-ի ԿԳՄՍ նախարարի 07.11.2017 թվականի N 1282-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման» կարգի դրույթներով, Եվրոպական և ազգային որակավորումների շրջանակի պահանջների հաշվառմամբ, սույն կարգով:

3. ՀՊՄՀ-ում մագիստրոսական կրթական ծրագրերում ուսումնառողների հետազոտական աշխատանքներն (հետազոտական աշխատանք կիսամյակի ընթացքում, հետազոտական պրակտիկա, գիտամանկավարժական պրակտիկա) իրականացվում են մագիստրոսական թեզի թեմային համապատասխան:

4. Սույն կարգով սահմանված պահանջները վերաբերում են ՀՊՄՀ-ում իրականացվող մասնագիտական կրթական բոլոր ծրագրերով ուսումնառությանը:

II. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԸ

5. Մագիստրոսական թեզը մագիստրոսական կրթական ծրագրի ամփոփիչ բաղադրիչն է, ինքնուրույն հետազոտական, վերլուծական, կիրառական նշանակության աշխատանք, որը նպաստում է ՀՀ-ի Որակավորումների ազգային շրջանակի 7-րդ մակարդակի, ինչպես նաև ոլորտային շրջանակի բնութագրիչների, մասնագիտական կրթական համապատասխան ծրագրով նախատեսված կրթական ելքային արդյունքների ձեռքբերմանը: Այն արտացոլում է տվյալ մասնագիտական ոլորտում սովորողի ձեռքբերած գիտելիքները կիրառելու, ինքնուրույն հետազոտություն կատարելու, վերլուծելու, համադրելու, հետազոտության արդյունքները ներկայացնելու, եզրահանգումներ կատարելու կարողությունները, մասնագիտական հիմնախնդիրներ բարձրացնելու ու դրանց լուծումներ առաջադրելու հմտությունները:

6. Մագիստրոսական թեզի թեմայի արդիականության, մասնագիտական կրթական ծրագրին նրա համապատասխանության, կատարման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար պատասխանատու է մասնագիտական ամբիոնը և թեզի ղեկավարը, իսկ թեզում ներկայացված տվյալների ճշգրտության համար պատասխանատու է սովորողը՝ մագիստրոսական թեզի հեղինակը:

7. Մագիստրոսական թեզի բովանդակության, կառուցվածքի, ներկայացման ձևի և ծավալի վերաբերյալ պարտադիր պահանջները սահմանվում են սույն կարգով:

7.1. Մագիստրոսական թեզի նպատակներն են՝

7.1.1. խորացնել սովորողի մասնագիտական տեսական և գործնական գիտելիքները, ամրապնդել և համակարգել դրանք՝ ապահովելով այդ գիտելիքների բարձր արդյունավետությամբ կիրառումը մասնագիտական խնդիրների լուծման գործընթացում,

7.1.2. ձևավորել բարձր մակարդակի հետազոտական և մեթոդական կարողություններ, որոնք անհրաժեշտ են ինքնուրույն և նորարարական հետազոտությունների իրականացման համար,

7.1.3. զարգացնել հետազոտությունների արդյունքների մշակման, վերլուծության, համակարգման, ինչպես նաև դրանց գործնական նշանակության և կիրառման հնարավոր ոլորտների գնահատման կարողությունները և հմտությունները,

7.1.4. ձևավորել սովորողի սեփական մասնագիտական գործունեության և հետազոտության արդյունքների ակադեմիական և մասնագիտական մակարդակով ներկայացման կարողությունները՝ ներառյալ գրավոր և բանավոր հաղորդակցության հմտությունների կատարելագործումը:

III. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԹԵՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

8. Մագիստրոսական թեզի թեման կարող է առաջարկվել ինչպես սովորողի, այնպես էլ համապատասխան մասնագիտական կրթական ծրագիրն իրականացնող ամբիոնի կողմից ոչ ուշ, քան առաջին ուսումնական տարվա սկզբից մեկ ամսվա ընթացքում:

9. Մագիստրոսական թեզի թեմայի ձևակերպումը որոշում է համապատասխան մագիստրոսական կրթական ծրագիրն իրականացնող ամբիոնը:

10. Մագիստրոսական թեզի թեման առկա ուսուցման համակարգում հաստատվում է մինչև տվյալ ուսումնական տարվա հոկտեմբերի 30-ը, իսկ հեռակա ուսուցման համակարգում՝ նոյեմբերի 30-ը՝ մասնագիտական կրթական ծրագիրն իրականացնող ամբիոնում: Այնուհետև հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնագիտական ամբիոնը թեմաները ներկայացնում է համապատասխան ֆակուլտետային խորհուրդ: Վերջինիս մոտակա առաջին նիստում հաստատված թեմաները համապատասխան ֆակուլտետների կողմից գրանցվում են Համալսարանի www.ams.aspu.am ուսումնական գործընթացի ավտոմատ կառավարման համակարգում: Թեմաների վերջնական հաստատման համար ռեկտորը ձևավորում է համալսարանական մեթոդական խորհուրդ, որի որոշմամբ թեման կարող է հաստատվել, ուղարկվել ֆակուլտետ, ամբիոն խմբագրման կամ ամբողջական փոփոխման:

11. Մագիստրոսական թեզի թեման կարող է մասնակի խմբագրվել մինչև ուսումնառության առաջին տարվա ավարտը, եթե առկա է կրթական ծրագիրն իրականացնող ամբիոնի համապատասխան հիմնավորումը: Խմբագրված թեման հինգօրյա ժամկետում պետք է գրանցվի Համալսարանի ուսումնական գործընթացի ավտոմատ կառավարման www.ams.aspu.am համակարգում:

12. Մագիստրոսական թեզի թեմայի ընտրության ժամանակ կարևոր է հաշվի առնել մի շարք չափանիշներ, որոնք ապահովում են հետազոտության արդյունավետությունն ու հաջող իրականացումը: Դրանք են.

12.1. Թեման պետք է համապատասխան լինի սովորողի մասնագիտությանը և մագիստրոսական ծրագրի պահանջներին ու վերջնարդյունքներին:

12.2. Թեման պետք է նպաստի տվյալ ոլորտում գիտելիքների զարգացմանը, արձանագրի և լրացնի առկա բացերը:

12.3. Թեման պետք է անդրադառնա տվյալ ոլորտի ժամանակակից խնդիրներին, մարտահրավերներին կամ նորարարական ուղղություններին:

12.4. Թեման պետք է ունենա գիտական կամ հասարակական կամ կիրառական

նշանակություն, որը կկարողանա օգտակար լինել մասնագիտական և լայն հանրության համար։

12.5. Թեման պետք է ներառի նոր գաղափարներ կամ մոտեցումներ։

12.6. Թեման ձևակերպելիս պետք է հաշվի առնել թեմայի իրականացման հնարավորությունը առկա ժամկետներում։

12.7. Թեման ընտրելիս պետք է հաշվի առնել սովորողի հետաքրքրությունները, ինչը կմղի նրան ավելի նվիրված աշխատել և կհամապատասխանի սովորողի ապագա կարիերայի պլաններին և մասնագիտական աճին։

12.8. Անհրաժեշտ է, որ թեման ունենա համապատասխան փորձառու ղեկավար, ով կկարողանա ուղղորդել և աջակցել սովորողին։

12.9. Մագիստրոսական թեզը պետք է համապատասխանի հետազոտական աշխատանքի էթիկական նորմերին, հատկապես եթե ներառում է մարդու կամ կենդանիների մասնակցություն։

12.10. Խրախուսվում են թեմաները, որոնք համադրում են տարբեր հետազոտական ոլորտներ՝ ստեղծելով նոր գիտելիքներ և համագործակցության հնարավորություններ։

12.11. Մագիստրոսական թեզի արդյունքները պետք է ունենան գործնական նշանակություն, որը նպաստում է ոլորտում քաղաքականության ձևավորմանը, որոշումների կայացմանը կամ խնդիրների գործնական լուծմանը։

IV. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

13. Մագիստրոսական թեզի կատարման ողջ գործընթացն ուղեկցվում է որակավորված մասնագետի՝ ղեկավարի կողմից։

14. Մագիստրոսական թեզ կարող են ղեկավարել մասնագիտական կրթական ծրագրի ուղղությանը համապատասխան գիտական աստիճան և/կամ կոչում ունեցող մասնագետները։

15. Առանձին դեպքերում, օրինակ՝ արվեստի և մշակույթի մասնագիտությունների դեպքում մագիստրոսական թեզ կարող են ղեկավարել համապատասխան ոլորտում փորձագիտական հեղինակություն, ճանաչում, ՀՀ արվեստի կամ մշակույթի վաստակավոր գործչի, ՀՀ վաստակավոր կամ ժողովրդական արտիստի կոչումներ ունեցող մասնագետները։

16. Առանձին դեպքերում մագիստրոսական թեզը կարող է իրականացվել համաղեկավարությամբ. մագիստրոսական թեզի համաղեկավար կարող է լինել ինչպես ՀՊՄՀ-

ի, այնպես էլ համապատասխան ոլորտի գիտական աստիճան ու կոչում ունեցող օտարերկրյա հրավիրյալ մասնագետը կամ համապատասխան մասնագիտական ոլորտի (պետական կամ մասնավոր) աշխատաշուկայի ներկայացուցիչը՝ մասնագիտական ամբիոնի հիմնավորմամբ։

17. Մագիստրոսական թեզի ղեկավարը՝

17.1. իրականացնում է խորհրդատվություն մագիստրոսական թեզի թեմայի ընտրության վերաբերյալ,

17.2. աջակցում է ըստ ուսումնական կիսամյակների մագիստրոսական թեզի պատրաստման աշխատանքային պլան-ժամանակացույցի (ներկայացված է Հավելված 5-ում և Հավելված 6-ում), դրան համապատասխան առաջադրանքների կազմման և իրականացման աշխատանքներում,

17.3. կատարում է թեմային առնչվող գիտական աղբյուրների ընտրության և օգտագործման վերաբերյալ առաջարկություններ,

17.4. իրականացնում է խորհրդատվություն՝ հետազոտության մեթոդաբանության մշակման, իրականացման ընթացակարգի վերաբերյալ,

17.5. իրականացնում է մագիստրոսական թեզի կատարման ժամանակացույցի վերահսկողություն,

17.6. ամբիոնի նիստերում տեղեկատվություն է ներկայացնում մագիստրոսական թեզի իրականացման ընթացքի և ժամկետների պահպանման վերաբերյալ (ըստ կիսամյակների),

17.7. իրականացնում է յուրաքանչյուր կիսամյակում սովորողի հաշվետվության վերահսկողություն և գնահատում,

17.8. իրականացնում է խորհրդատվություն մագիստրոսական թեզի պաշտպանության գործընթացի և սովորողի պաշտպանական խոսքի պատրաստման վերաբերյալ,

17.9. սովորողին տրամադրում է տեղեկատվություն սույն կարգի դրույթների, պահանջների, հետազոտական էթիկայի, ակադեմիական ազնվության, մագիստրոսական թեզի գնահատման բաղադրիչների, չափանիշների վերաբերյալ,

17.10. գրավոր ներկայացնում է «Ղեկավարի կարծիք» (Հավելված 4) ամբիոնում մագիստրոսական թեզի նախնական պաշտպանության արդյունքում հրապարակային պաշտպանության երաշխավորելու կամ չերաշխավորելու որոշումից հետո առավելագույնը 10 օրվա ընթացքում։

V. ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ

18. Սովորողն ատեստավորվում է (մագիստրոսական թեզի պատրաստումն ըստ

ուսումնական կիսամյակների գնահատվում է դրական) համապատասխան մասնագիտական կրթական ծրագիրն իրականացնող ամբիոնի կողմից յուրաքանչյուր կիսամյակում (տե՛ս ըստ կիսամյակների պլանավորումը սույն կարգի կետ 25-ում՝ Հավելված 5 և Հավելված 6)։

19. Ատեստավորումն իրականացվում է սույն կարգի կետ 25-ի պահանջների համաձայն սովորողի կողմից մագիստրոսական թեզի պատրաստման ընթացքի վերաբերյալ ղեկավարին ներկայացված կիսամյակային հաշվետվության և համապատասխան նյութերի հիման վրա։

20. Սովորողի կողմից հաշվետվության ներկայացման վերահսկողությունն ու գնահատումը իրականացնում է ղեկավարը։

VI. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

21. Մագիստրոսական թեզի կառուցվածքային տարրերը, դրանց բովանդակության վերաբերյալ պահանջները և ծավալները ներկայացված են աղյուսակ 1-ում։

Աղյուսակ 1.

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԱՐՐԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ	ԾԱՎԱԼԸ (ԲԱՌԵՐԻ ՔԱՆԱԿՈՎ)
ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ	Տիտղոսաթերթը սույն կարգի պահանջներով կառուցված առաջին էջն է, որն ունի տեղեկատվական բնույթ։	Հավելված 1.
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	Հերթականությամբ ներկայացվում են մագիստրոսական թեզի կառուցվածքային բոլոր տարրերը (ներառյալ՝ հավելվածները)՝ գլուխները, ենթագլուխները, դրանց համապատասխան էջերը։	Հավելված 2.
ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ (երկու լեզուներով՝ հայերեն, անգլերեն)	Համառոտագրում պետք է դիտարկվի հետազոտության խնդիրները և նպատակները, օգտագործված մեթոդները, հիմնական վերջնարդյունքները և ներդրումները։ Համառոտագրությունից հետո պետք է ներառել 10–15 հիմնաբառ նույնպես երկու լեզվով։	Մինչև 400 բառ
ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԽՈՍՔ	Երախտագիտության բաժինը պետք է լինի հակիրճ՝ ընդգծելով աջակցության ստացած հիմնական աղբյուրները, ինչպիսիք են գիտական ղեկավարները, գործընկերները և ֆինանսավորող կազմակերպությունները (եթե այդպիսիք առկա են)։ Այն պետք է արտահայտի շնորհակալություն՝ առանց ավելորդ խանդավառության, հետևելով ակադեմիական հստակ ոճին։	Մինչև 300 բառ
ՆԿԱՐՆԵՐԻ ԵՎ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ (առկայության դեպքում)	Ներկայացվում է մագիստրոսական թեզում առկա նկարների, տրամագրերի, աղյուսակների հաջորդական ցանկը, ներառյալ դրանց անվանումները	

	և համապատասխան էջերի համարները: Դրանց վերնագրերը պետք է լինեն հակիրճ, բայց նկարագրական՝ հետևելով ենթագրերի ԱՀԱ (APA) ձևաչափին:	
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՑԱՆԿ (եթե առկա են)	Ներկայացվում են մագիստրոսական թեզում օգտագործված բոլոր հապավումների և մասնագիտացված եզրույթների այբբենական ցանկը՝ ներառելով ոչ մասնագետ լսարանի համար անծանոթ եզրույթների համառոտ բացատրություններ:	
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	Պետք է հստակ բովանդակի թեմայի արդիականությունը, հետազոտության առաջադիր նպատակը, խնդիրները, հետազոտական հարցերը (եթե կիրառելի են), կանխատեսելի կամ ակնկալվող արդյունքները:	500-800 բառ
ԳԼՈՒԽ 1. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	Գլուխ 1-ի ենթագլուխների քանակը և դրանց վերնագրերը որոշում է սովորողը՝ ղեկավարի հետ համատեղ: Ներկայացվում է թեմային համապատասխան գիտական գրականության քննադատական վերլուծություն, գոյություն ունեցող հետազոտությունների, հայեցակարգային մոտեցումների մեկնաբանություն: Կարևոր է, որպեսզի հստակ ընդգծվեն հիմնախնդրի ուսումնասիրվածության սահմանները, գործնականում չլուծված խնդիրները: Սովորողն այստեղ ներկայացնում է նաև հիմնախնդրին վերաբերող իր հետազոտության տիրույթը, խնդիր/ները:	1500-2000 բառ
ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ	Գլուխ 2-ի ենթագլուխների քանակը և դրանց վերնագրերը որոշում է սովորողը ղեկավարի հետ համատեղ: Այս գլխում ներկայացվում է մագիստրոսական թեզի հետազոտության կազմակերպման գործընթացում կիրառված մեթոդների, մեթոդիկաների մանրամասն նկարագրությունը (քանակական, որակական կամ խառը մեթոդներ), հետազոտության ընտրանքը, վայրը, տվյալների հավաքագրման գործիքներն ու ընթացակարգերը, դրանց վերլուծության տեխնիկան: Կարևոր է, որպեսզի սովորողն աշխատանքը կատարելիս հաշվի առնի ակադեմիական ազնվության, հետազոտությունների էթիկական նորմերը և սահմանափակումները. ▪ **Իրազեկվածության համաձայնություն**. եթե թեզը ներառում է տվյալների հավաքագրում մարդկանցից (օրինակ՝ հարցումներ, հարցազրույցներ կամ փորձարկումներ), հետազոտվողները պետք է լիարժեք տեղեկացված լինեն իրենց մասնակցության նպատակների, գործընթացների և հնարավոր հետևանքների մասին: ▪ **Գաղտնիության պահպանում**. հետազոտության ընթացքում հավաքագրված տվյալները պետք է	2000-3000 բառ

	պահպանվեն խիստ գաղտնի՝ բացառելով դրանց անհարկի տարածումը կամ անձնական տվյալների բացահայտումը: ▪ **Արդարություն**. հետազոտության մեջ ներգրավված բոլոր անձանց հանդեպ պետք է ցուցաբերվի հավասար վերաբերմունք՝ բացառելով խտրականության որևէ ձև: ▪ **Մասնակիցներին վնասելու բացառություն**. թեզի շրջանակներում արգելվում է իրականացնել այնպիսի գործողություններ, որոնք կարող են վնաս հասցնել ֆիզիկական կամ հոգեբանական տեսանկյունից: ▪ **Տվյալների կեղծում**. արգելվում է գիտական տվյալների կամ արդյունքների կեղծումը, որոնք կարող են խաթարել հետազոտության օբյեկտիվությունը: Արգելվում է նաև արհեստական բանականության համակարգերի կողմից գեներացավող տեղեկատվության անհարկի օգտագործումը, ոչ ավել, քան ամբողջ թեզի ծավալի 7 տոկոսը: ▪ **Օգտագործած աղբյուրների չարաշահում.** արգելվում է հեղինակային իրավունքների խախտումը կամ օգտագործված աղբյուրների ոչ պատշաճ նշումը: Այնուհետև ներկայացվում են հետազոտության արդյունքները՝ օգտագործելով աղյուսակներ, տրամագրեր կամ նկարներ՝ անհրաժեշտության դեպքում:	
ԳԼՈՒԽ 3. ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	Գլուխ 3-ի ենթաբաժինների քանակը և դրանց վերնագրերը որոշում է սովորողը՝ ղեկավարի հետ համատեղ: Այս բաժնում անհրաժեշտ է քննարկել հետազոտության արդյունքների կիրառական նշանակությունը հետազոտության նպատակի և 1-ին գլխում վերլուծված գրականության համատեքստում: Կարևոր է անդրադառնալ արդյունքների համապատասխանությանը, հնարավոր բացատրություններին, սահմանափակումներին և առաջարկել ապագա հետազոտությունների ուղղություններ:	800-1000 բառ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Այս բաժնում պետք է ամփոփել աշխատանքի ընդհանուր նպատակը, լուծված խնդիրները, կատարել ինքնուրույն եզրահանգումներ և առաջարկել գործնական կամ տեսական առաջարկություններ՝ առանց կրկնելու նախորդ բաժնի մանրամասները: Անհրաժեշտ է եզրակացությունները ձևակերպել առանձին կետերով, հստակ, հակիրճ, կոնկրետ, ներածության մեջ սահմանված խնդիրներին համապատասխան:	700-800 բառ
ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	Այս բաժնում ներկայացվում է մագիստրոսական թեզում մեջբերված բոլոր աղբյուրների համապարփակ և ճշգրիտ թվարկումը հղումների ձևավորման ԱՀԱ (APA) համակարգով (https://apastyle.apa.org/)	Հավելված 7.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ Հավելված 1. Հավելված 2. Հավելված 3.	Հավելվածներում ներկայացվում են մեթոդիկաները, դիագրամները, գծագրերը, աղյուսակները, նորմատիվ-իրավական ակտերի համապատասխան հատվածները: Պարտադիր է, որպեսզի տեքստում բոլոր հավելվածների վերաբերյալ կատարվեն վկայակոչումներ «Տե՛ս հավելված -» արտահայտությամբ:	

VII. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

22. Մագիստրոսական թեզը հրապարակային պաշտպանության է ներկայացվում համակարգչային շարվածքով՝ տպագիր, կազմված թղթային և էլեկտրոնային տարբերակներով (*.docx կամ *.pdf): Թղթի չափսը՝ A4, լուսանցքները՝ ձախից 3 սմ, 1.5 աջից, վերևից և ներքևից՝ 2 սմ: Տեքստը մուտքագրվում է Unicode կոդավորման համակարգի GHEA Grapalat կամ Sylfaen տառատեսակի կիրառմամբ: Վերնագրերը և տեքստը գրվում են 12 տառաչափով, միջտողային հեռավորությունը՝ 1.5: Գլուխների վերնագրերը գրվում են թավ (bold), էջի առաջին տողում, մեջտեղում և գլխատառերով: Յուրաքանչյուր գլուխ, ինչպես նաև «ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ», «ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ», «ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԽՈՍՔ», «ՆԿԱՐՆԵՐԻ ԵՎ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ», «ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՑԱՆԿ», «ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ», «ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ», «ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ», «ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ» բաժինները, սկսվում են նոր էջից: Ենթագլուխների վերնագրերը գրվում են թավ (bold), մեջտեղում, փոքրատառերով, ոչ նոր էջից: Պարբերությունները սկսվում են նոր տողից՝ 1սմ խորքից: Աշխատանքի բոլոր էջերը, ներառյալ հավելվածները, համարակալվում են ներքևում: Համարակալումը սկսվում է առաջին էջից՝ տիտղոսաթերթից, որի վրա էջի համարը՝ 1-ը, չի դրվում:

23. Մագիստրոսական թեզում առկա աղյուսակները, նկարներն ու գծապատկերները համարակալվում են և դրանց տրվում են անվանումներ: Համարակալումները դրվում են վերջիններիս անմիջապես վերևում, աջ կողմում՝ 12 տառաչափով: Օրինակ՝ Աղյուսակ 1, Նկար 1, Գծապատկեր 1, որոնցից յուրաքանչյուր տեսակի համար կատարվում է առանձին համարակալում: Նկարների, աղյուսակների, գծապատկերների անվանումները, նշանակումների բացատրությունները գրվում են անմիջապես դրանց ներքևում, առանց տող բաց թողնելու:

24. Հավելվածների համարակալումը գրվում է նոր էջի առաջին տողի աջ անկյունում՝ 12 տառաչափով, bold-ով, փոքրատառերով: Օրինակ՝ **Հավելված 1**, որից մեկ տող ներքև, մեջտեղում, 12 տառատեսակով, գրվում է հավելվածի վերնագիրը:

VIII. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԻՍԱՄՅԱԿՆԵՐԻ

25. Մագիստրոսական թեզի պատրաստման աշխատանքների բովանդակությունն ըստ կիսամյակների առկա (4 կիսամյակ) և հեռակա (5 կիսամյակ) համակարգերի համար ներկայացված է համապատասխանաբար Հավելված 5-ում և Հավելված 6-ում:

IX. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

26. Մագիստրոսական թեզ պատրաստող սովորողին հրապարակային պաշտպանությանը նախապատրաստելու և աշխատանքի վերաբերյալ վերջնական դիտարկումներ ու առաջարկություններ կատարելու նպատակով պաշտպանությունից առնվազն երեք շաբաթ առաջ ամբիոնը կազմակերպում է մագիստրոսական թեզի նախապաշտպանություն՝ կազմելով հանձնաժողով ամբիոնի վարիչի, սովորողի գիտական ղեկավարի և ամբիոնի այլ մասնագետների մասնակցությամբ:

27. Նախապաշտպանության ընթացքում հանձնաժողովը լսում է սովորողի հաղորդումը կատարված աշխատանքի և ստացված արդյունքների վերաբերյալ: Հանձնաժողովը կատարում է դիտարկումներ առկա խնդիրների վերաբերյալ և անհրաժեշտության դեպքում ժամանակ տալիս դրանց շտկման համար, որը չի կարող գերազանցել 10 օրը:

28. Հանձնաժողովը քննարկում է մագիստրոսական թեզը, գիտական ղեկավարի բանավոր կարծիքը և սովորողի ներկայացման արդյունքում կայացնում է հետևյալ որոշումներից որևէ մեկը.

28.1.մագիստրոսական թեզը երաշխավորել հրապարակային պաշտպանության,

28.2.ժամանակ տրամադրել սովորողին մագիստրոսական թեզի մեջ առկա խնդիրները շտկելու համար՝ նշելով վերափոխված տարբերակը ամբիոն ներկայացնելու վերջնաժամկետը (առավելագույնը 10 օր),

28.3.մագիստրոսական թեզը չերաշխավորել հրապարակային պաշտպանության (հանձնաժողովը կազմում է որոշման վերաբերյալ արձանագրություն՝ հիմնավորելով պատճառները): **Այս դեպքում սովորողը չի կարող մասնակցել հրապարակային պաշտպանության:**

29. Ամբիոնը կազմակերպում է մագիստրոսական թեզի գրախոսումը: Մագիստրոսական

թեզի գրախոսումը կարող են իրականացնել գիտական աստիճան ունեցող դասավանդողները, ինչպես նաև արտադրության, գիտական հիմնարկների և այլ հաստատությունների տարբեր հաստատությունների համապատասխան գիտական աստիճան ունեցող մասնագետները, որոնց կազմն առաջարկվում և հաստատվում է ամբիոնի կողմից։

30. Գրախոսը սահմանված ժամկետում՝ գրախոսման համար մագիստրոսական թեզը ստանալուց հետո առավելագույնը տասն օրվա ընթացքում իր կարծիքը (Հավելված 3) ներկայացնում է ամբիոն։

31. Մագիստրոսական թեզի պաշտպանությանը երաշխավորված, բայց չներկայացած (վերջինս ռեկտորատի թույլտվությամբ նույն քննաշրջանում մասնակցում է ամփոփիչ ատեստավորման գործընթացին այն դեպքում, երբ հարգելի պատճառներով հիմնավորված (փաստաթղթավորված) է մագիստրոսական թեզի պաշտպանությանը գրաֆիկով հաստատված օրը նրա ներկա լինելու անհնարինությունը, իսկ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը դեռևս շարունակում է իր աշխատանքները) կամ ներկայացած և «անբավարար» գնահատված սովորողը կարող է պաշտպանել թեզը (նոր կամ նախկինում հաստատված թեմայով) հաջորդ ուսումնական տարիներին։

32. Մագիստրոսական թեզի հրապարակային պաշտպանությունը ձայնագրվում է և պահպանվում՝ ըստ գործող կարգի։

33. Մագիստրոսական թեզի հրապարակային պաշտպանությունն իրականացվում է համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 2017 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 1282-Ն հրամանով հաստատված «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման» կարգի դրույթների։

X. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

34. Մագիստրոսական թեզի գնահատումն իրականացվում է 100 միավորանոց սանդղակով՝ համաձայն ՀՊՄՀ-ի սովորողների գիտելիքների ստուգման ու գնահատման համակարգի, Աղյուսակ 4-ում ներկայացված բաղադրիչներով։

Աղյուսակ 4.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿՇԻՌ (ՄԱՄՆԱԲԱԺԻՆ)
Թեմայի/հիմնախնդրի արդիականության	10%

հիմնավորումը	
Գրականության վերլուծությունը	20%
Հետազոտության իրականացումն ու արդյունքները	25%
Թեզի շարադրանքը և ձևավորումը	5%
Թեզի ներկայացումը և հարցերին տրվող պատասխանները պաշտպանությանը	40%

35. Մագիստրոսական թեզի գնահատականն ենթակա է բողոքարկման ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կողմից ընթացակարգային խախտումների առկայության և դրանց արձանագրման դեպքում:

36. Մագիստրոսական թեզի գնահատման արդյունքները հայտարարվում են պաշտպանության օրը: Գնահատականի հրապարակումից հետո մեկ ժամվա ընթացքում սովորողը ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահին կարող է ներկայացնել գրավոր դիմում-բողոք, որը քննարկվում է նույն օրը բողոքարկման հանձնաժողովի նիստում:

37. Սովորողի ներկայությամբ բողոքարկման հանձնաժողովը, միանալով ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովին, լսում է պաշտպանության ձայնագրությունն ու երկու հանձնաժողովների անդամների ձայների պարզ մեծամասնությամբ կայացնում հետևյալ որոշումներից մեկը՝

37.1. գնահատականը թողնել անփոփոխ,

37.2. գնահատականը բարձրացնել:

38. Հանձնաժողովի քարտուղարը կայացված որոշման վերաբերյալ կազմում է համապատասխան արձանագրություն, որը ստորագրում են երկու հանձնաժողովների բոլոր ներկա անդամները:

39. Բողոքարկումից հետո ամրագրված գնահատականը փոփոխման ենթակա չէ:

XI. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

40. Սույն կարգը տարածվում է 2024-2025 ուսումնական տարում և դրանից հետո մագիստրատուրա ընդունված կամ ուսումնառության իրավունքները 2024-2025 ուսումնական տարում 1-ին կուրսում վերականգնած կամ տեղափոխված սովորողների վրա:

Հավելված 1

Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

_____ՖԱԿՈՒԼՏԵՏ

_____ԱՄԲԻՈՆ

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶ

Սովորողի ազգանուն, անուն, հայրանուն

Թեման

Ներկայացված է մագիստրոսի որակավորման հայցմանը

«_____ (գրվում է դասիչը)» մասնագիտությամբ

Գիտական ղեկավար՝ _____

ստորագրություն

_____

գիտական աստիճան, կոչում, ազգանուն, անուն

«Թույլատրվում է պաշտպանության»

Ամբիոնի վարիչ՝ _____

ստորագրություն

_____

գիտական աստիճան, կոչում, ազգանուն, անուն

ԵՐԵՎԱՆ 20—

Հավելված 2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ.....

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԽՈՍՔ.....

ՆԿԱՐՆԵՐԻ ԵՎ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ.....

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՑԱՆԿ.....

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....

ԳԼՈՒԽ 1. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....

1.1.

1.2.

1.3.

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ.....

2.1.

2.2.

2.3.

ԳԼՈՒԽ 3. ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ .....

3.1.

3.2.

3.3.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....

Հավելված 1.

Հավելված 2.

Հավելված 3.

Հավելված 3

ԳՐԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սովորող՝ _____

անուն, ազգանուն, հայրանուն

Մասնագիտական կրթական ծրագիր՝ _____

Ամբիոն՝ _____

Մագիստրոսական թեզի թեմա_____

_____

1. Թեմայի համապատասխանությունը ՄԿԾ-ին և ՈԱՇ-ի 7-րդ մակարդակին

_____

_____

2. Թեմայի արդիականության հիմնավորումը, կիրառական նշանակությունը

_____

_____

_____

3. Գրականության վերլուծությունը

_____

_____

_____

4. Հետազոտական աշխատանքի ինքնուրույնությունը, տրամաբանական ամբողջականությունը, արդյունքների մշակվածությունը, նոր մոտեցումների և ստեղծագործական լուծումներ առաջադրելու հմտությունների առկայությունը

_____

_____

_____

5. Դիտողություններ մագիստրոսական թեզի վերաբերյալ

_____

_____

_____

6. Եզրակացություն (կատարվում է նշում համապատասխան վանդակում)

Աշխատանքը բավարարում է մագիստրոսական թեզին ներկայացվող պահանջներին ☐

Աշխատանքը չի բավարարում մագիստրոսական թեզին ներկայացվող պահանջներին ☐

ԳՐԱԽՈՍ՝ _____

ստորագրություն

_____

գիտական աստիճան, կոչում, ազգանուն, անուն

«____»_____20___թ.

Հավելված 4

ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԾԻՔ

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սովորող՝ _____

անուն, ազգանուն, հայրանուն

Մասնագիտական կրթական ծրագիր՝ _____

Ամբիոն՝ _____

Մագիստրոսական թեզի թեմա_____

_____

1. Մագիստրոսական թեզի ձևավորման համապատասխանությունը սույն կարգի պահանջներին

_____

_____

2. Հետազոտական աշխատանքի արդիականությունը, արդյունքների կիրառական նշանակությունը

_____

_____

_____

3. Սովորողի ինքնուրույնությունը, հետազոտական աշխատանքի կատարելու կարողությունը (տվյալներ հավաքագրելու, դրանք, վերլուծելու, եզրակացություններ կատարելու կարողություններ և հմտություններ)

_____

_____

_____

4. Մագիստրոսական թեզի ուժեղ և թույլ կողմերը

_____

_____

_____

_____

_____

Եզրակացություն (կատարվում է նշում համապատասխան վանդակում)

Աշխատանքը բավարարում է մագիստրոսական թեզին ներկայացվող պահանջներին ☐

Աշխատանքը չի բավարարում մագիստրոսական թեզին ներկայացվող պահանջներին ☐

ՂԵԿԱՎԱՐ՝ _____

ստորագրություն

_____

գիտական աստիճան, կոչում, ազգանուն, անուն

«____»_____20___թ.

Հավելված 5

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԿԻՍԱՄՅԱԿՆԵՐԻ

ԱՌԿԱ (4 ԿԻՍԱՄՅԱԿ)

Հ.հ	Աշխատանքների բովանդակություն	1-ին կիսամյակ	2-րդ կիսամյակ	3-րդ կիսամյակ	4-րդ կիսամյակ
1.	Մագիստրոսական թեզի թեմայի և ղեկավարի ընտրություն	հոկտեմբեր			
	Մագիստրոսական թեզի թեմայի և ղեկավարի հաստատում	մինչև հոկտեմբերի 30			
	Մագիստրոսական թեզի կատարման աշխատանքային պլան-ժամանակացույցի կազմում, մագիստրոսական թեզի թեմային/հիմնախնդրին վերաբերող գրականության ցանկի կազմում և հստակեցում ղեկավարի հետ	նոյեմբեր, դեկտեմբեր			
	Վերոնշյալի կատարման վերաբերյալ հաշվետվության ներկայացում ղեկավարին, ամբիոնին	դեկտեմբեր			
	ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ Թեմայի արդիականության հիմնավորում, հետազոտության առաջադիր նպատակի, խնդիրների, հետազոտական հարցերի հստակեցում, կանխատեսվող արդյունքների ձևակերպում	հունվար			
2.	ԳԼՈՒԽ 1. Գիտական գրականության քննադատական վերլուծություն, գոյություն ունեցող հետազոտությունների, հայեցակարգերի, մոտեցումների ուսումնասիրություն, հետազոտվող հիմնախնդրի ժամանակակից վիճակի նկարագրություն, սեփական հետազոտության սահմաններում մշակված նյութի կիրառելիության		Փետրվար, մարտ, ապրիլ		

	գնահատում, ինչպես նաև հիմնախնդրի մշակման մեջ իր ակնկալվող ներդրման տիրույթի նախագծում				
	ԳԼՈՒԽ 2. Հետազոտության մեթոդաբանության՝ մեթոդների, մեթոդիկաների, մասնակիցների (ընտրանքի), վայրի հստակեցում, հետազոտության պլանի, ժամանակացույցի կազմում		Մայիս, հունիս		
	Վերոնշյալի կատարման վերաբերյալ հաշվետվության ներկայացում ղեկավարին, ամբիոնին		Հունիս		
3.	Տվյալների հավաքագրում			Սեպտեմբեր, հոկտեմբեր	
	Տվյալների վերլուծություն			Նոյեմբեր, դեկտեմբեր	
	ԳԼՈՒԽ 3. Հետազոտության արդյունքների հստակ և օբյեկտիվորեն ներկայացում՝ օգտագործելով աղյուսակներ, տրամագրեր կամ նկարներ			Դեկտեմբեր, հունվար	
	Վերոնշյալի կատարման վերաբերյալ հաշվետվության ներկայացում ղեկավարին, ամբիոնին			Դեկտեմբեր	
4.	Հետազոտության նպատակի և վերլուծված գրականության համատեքստում դրանց կիրառական նշանակության քննարկում				Փետրվար
	Հետազոտության արդյունքների հիման վրա եզրակացությունների, դրանց գործնականում կրառության վերաբերյալ առաջարկությունների ձևակերպում				Մարտ
	Մագիստրոսական թեզի աշխատանքների ամփոփում				Մարտ
	Մագիստրոսական թեզի հիմնախնդրի հետազոտության արդյունքներով գիտաժողովի,				Ապրիլ

	գիտական սեմինարի համար զեկույցի, ինչպես նաև պաշտպանական խոսքի, համապատասխան տեսաներկայացման և տպագրության համար հոդվածի պատրաստում				
	Մագիստրոսական թեզի ներկայացում ամբիոն				Մայիս
	Վերոնշյալի կատարման վերաբերյալ հաշվետվության ներկայացում ղեկավարին, ամբիոնին				Մայիս

Հավելված 6.

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԿԻՍԱՄՅԱԿՆԵՐԻ

ՀԵՌԱԿԱ (5 ԿԻՍԱՄՅԱԿ)

Հ.հ	Աշխատանքների բովանդակություն	1-ին կիսամյակ	2-րդ կիսամյակ	3-րդ կիսամյակ	4-րդ կիսամյակ	5-րդ կիսամյակ
1	Մագիստրոսական թեզի թեմայի և ղեկավարի ընտրություն	Հոկտեմբեր, նոյեմբեր				
	Մագիստրոսական թեզի թեմայի և ղեկավարի հաստատում	Մինչև նոյեմբերի 30-ը				
	Մագիստրոսական թեզի կատարման աշխատանքային պլան-ժամանակացույցի կազմում, մագիստրոսական թեզի թեմային/հիմնախնդրին վերաբերող գրականության ցանկի կազմում և հստակեցում ղեկավարի հետ	Դեկտեմբեր, հունվար				
	Վերոնշյալի կատարման վերաբերյալ հաշվետվության ներկայացում ղեկավարին, ամբիոնին	Փետրվար				
2.	ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ Թեմայի արդիականության հիմնավորում, հետազոտության առաջադիր նպատակի, խնդիրների, հետազոտական հարցերի հստակեցում, կանխատեսվող արդյունքների ձևակերպում		Փետրվար, մարտ			
	ԳԼՈՒԽ 1. Գիտական գրականության քննադատական վերլուծություն, գոյություն ունեցող հետազոտությունների,		Ապրիլ, մայիս, հունիս			

	հայեցակարգի, մոտեցումների ուսումնասիրություն, հետազոտվող հիմնախնդրի ժամանակակից վիճակի նկարագրություն, սեփական հետազոտության սահմաններում մշակված նյութի կիրառելիության գնահատում, ինչպես նաև հիմնախնդրի մշակման մեջ իր ակնկալվող ներդրման տիրույթի նախագծում					
	Վերոնշյալի կատարման վերաբերյալ հաշվետվության ներկայացում ղեկավարին, ամբիոնին		Հուլիս			
3.	ԳԼՈՒԽ 2. Հետազոտության մեթոդաբանության՝ մեթոդների, մեթոդիկաների, մասնակիցների (ընտրանքի), վայրի հստակեցում, հետազոտության պլանի, ժամանակացույցի կազմում			Սեպտեմբեր		
	Տվյալների հավաքագրում			Հոկտեմբեր, նոյեմբեր		
	Տվյալների վերլուծություն			Դեկտեմբեր, հունվար		
	Վերոնշյալի կատարման վերաբերյալ հաշվետվության ներկայացում ղեկավարին, ամբիոնին				Փետրվար	
4.	ԳԼՈՒԽ 3. Հետազոտության արդյունքների հստակ և օբյեկտիվորեն ներկայացում՝ օգտագործելով աղյուսակներ,				Փետրվար, մարտ	

	տրամագրեր կամ նկարներ					
	Հետազոտության նպատակի և գրականության համատեքստում դրանց կիրառական նշանակության քննարկում				Ապրիլ, մայիս, հունիս	
	Վերոնշյալի կատարման վերաբերյալ հաշվետվության ներկայացում ղեկավարին, ամբիոնին				Հուլիս	
5.	Հետազոտության արդյունքների հիման վրա եզրակացությունների, դրանց գործնականում կրառության վերաբերյալ առաջարկությունների ձևակերպում					Սեպտեմբեր, հոկտեմբեր
	Մագիստրոսական թեզի աշխատանքների ամփոփում					Նոյեմբեր
	Մագիստրոսական թեզի հիմնախնդրի հետազոտության արդյունքներով գիտաժողովի, գիտական սեմինարի համար զեկույցի, ինչպես նաև պաշտպանական խոսքի, համապատասխան տեսաներկայացման և տպագրության համար հոդվածի պատրաստում					Նոյեմբեր, դեկտեմբեր
	Մագիստրոսական թեզի ներկայացում ամբիոն					Դեկտեմբեր
	Վերոնշյալի կատարման վերաբերյալ հաշվետվության ներկայացում ղեկավարին, ամբիոնին					Դեկտեմբեր

Հավելված 7

ԱՀԱ (APA) ՀՂՈՒՄՆԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ամերիկյան հոգեբանական ասոցիացիայի (ԱՀԱ) 7-րդ հրատարակությունը լայնորեն կիրառվում է հումանիտար և սոցիալական գիտությունների ոլորտում գիտական աշխատանքների մեջբերման համար: Այս ուղեցույցում կներկայացնենք ինչպես կատարել տեքստում հղումներ և ինչպես կազմել աղբյուրների ցանկը՝ ներառելով նաև արհեստական բանականությամբ գեներացված աղբյուրների հղումները:

1. Տեքստում հղումներ

Տեքստում հղումները թույլ են տալիս ընթերցողին իմանալ, թե որտեղից են գալիս տեղեկությունները: ԱՀԱ 7 համակարգում տեքստում հղումները բաղկացած են հեղինակի ազգանունից և հրատարակության տարեթվից:

1.1. Մեկ հեղինակ

- **Օրինակ (հեղինակի ազգանունը նախադասության մեջ):**

Սարգսյանը (2020) նշում է, որ կրթության ոլորտում փոփոխությունները անհրաժեշտ են:

- **Օրինակ (հեղինակի ազգանունը փակագծերում):**

Կրթության ոլորտում փոփոխությունները անհրաժեշտ են (Սարգսյան, 2020):

1.2. Երկու հեղինակ

- **Օրինակ:**

Մատինյանն ու Աբրահամյանը (2019) ուսումնասիրել են տնտեսության զարգացման միտումները:

Տնտեսության զարգացման միտումները ուսումնասիրվել են (Մատինյան & Աբրահամյան, 2019):

1.3. Երեք և ավելի հեղինակներ

- **Առաջին հղման դեպքում բոլոր հեղինակները նշվում են.**

Կարապետյան, Հովհաննիսյան և Պետրոսյան (2018) պարզել են, որ...

- **Հետագա հղումների դեպքում կիրառվում է «և այլք» («et al.»).**

Կարապետյան և այլք (2018) նշում են, որ...

... (Կարապետյան և այլք, 2018)։

1.4. Հեղինակ չունեցող աղբյուրներ

- **Օգտագործեք կազմակերպության անունը կամ աշխատության վերնագրի առաջին բառերը։**

Ըստ Կրթության նախարարության (2017) տվյալների...

... (Կրթության նախարարություն, 2017)։

1.5. Բազմաթիվ աղբյուրներ միևնույն հղման մեջ

- **Օրինակ։**

Բազմաթիվ ուսումնասիրություններ հաստատում են այս արդյունքները (Սարգսյան, 2020; Մաթևոսյան, 2019; Գրիգորյան, 2018)։

1.6. Մեջբերում էջերի համարներով

- **Եթե մեջբերում եք կոնկրետ էջից, նշեք էջի համարը։**

... (Սարգսյան, 2020, էջ 25)։

2. Աղբյուրների ցանկ (տեղադրվում է թեզի վերջում)

Աղբյուրների ցանկը տրամադրում է ամբողջական տեղեկություն յուրաքանչյուր հղված աղբյուրի մասին, ինչը թույլ է տալիս ընթերցողին գտնել և ստուգել այդ աղբյուրները։

2.1. Գիրք

- **Ֆորմատ։**

Հեղինակ, Ա. Ա. (Տարեթիվ)։ *Գրքի վերնագիր*։ Հրատարակիչ։

- **Օրինակ։**

Պետրոսյան, Ա. (2015)։ *Հայաստանի պատմություն*։ Երևանի Համալսարանի Հրատարակչություն։

2.2. Հոդված գիտական ամսագրում

- **Ֆորմատ։**

Հեղինակ, Ա. Ա., & Հեղինակ, Բ. Բ. (Տարեթիվ)։ Հոդվածի վերնագիր։ *Ամսագրի անվանումը*, Հատոր(Համար), Էջեր։ https://doi.org/xx.xxx/yyyy

- **Օրինակ։**

Մանուկյան, Կ., և Գրիգորյան, Ս. (2017)։ Տեղեկատվական տեխնոլոգիաների

ազդեցությունը կրթության վրա։ *Կրթության Գիտություն*, 12(3), 45–60։ https://doi.org/10.1234/edu.2017.12.3.45

2.3. Գլուխ խմբագրված գրքում

- **Ֆորմատ:**

Հեղինակ, Ա. Ա. (Տարեթիվ)։ Գլխի վերնագիր։ Ե. Խմբագիր (Խմբ.), *Գրքի վերնագիր* (էջեր)։ Հրատարակիչ։

- **Օրինակ:**

Արզումանյան, Լ. (2016) ։ Հայկական լեռնաշխարհի բուսական աշխարհը։ Ե. Հովհաննիսյան (Խմբ.), *Հայաստանի բնությունը* (էջ 55–70) ։ Գիտություն Հրատարակչություն։

2.4. Առցանց աղբյուր

- **Ֆորմատ:**

Հեղինակ, Ա. Ա. (Տարեթիվ)։ Վերնագիր։ Վերցված Ամսաթիվ, URL

- **Օրինակ:**

Նալբանդյան, Դ. (2021)։ Թվայնացման գործընթացները Հայաստանում։ Վերցված սեպտեմբերի 15, 2023՝ http://www.example.com/digitalization-armenia

2.5. Հեղինակ չունեցող աղբյուր

- **Ֆորմատ:**

Վերնագիր։ (Տարեթիվ)։ Հրատարակիչ։

- **Օրինակ:**

Հայաստանի Հանրապետության վիճակագրական տարեգիրք։ (2020)։ Ազգային Վիճակագրական Ծառայություն։

3. Արհեստական բանականությամբ գեներացված աղբյուրների հղումներ

3.1. Տեքստում հղումներ

Երբ մեջբերում եք արհեստական բանականության (օրինակ՝ ChatGPT) կողմից ստեղծված բովանդակությունը, պետք է նշել մոդելի անունը և տարեթիվը։

- **Օրինակ (հեղինակը նախադասության մեջ):**

Ըստ OpenAI-ի ChatGPT մոդելի (2023)…

- **Օրինակ (հեղինակը փակագծերում):**

... (OpenAI, 2023):

3.2. Աղբյուրների ցանկում

- **Ֆորմատ:**

Հեղինակային Կազմակերպություն: (Տարեթիվ): Արհեստական բանականության մոդելի անունը [AI լեզվային մոդել]: Վերցված Ամսաթիվ, URL

- **Օրինակ:**

OpenAI: (2023): ChatGPT [AI լեզվային մոդել]: Վերցված հոկտեմբերի 1, 2023՝ https://chat.openai.com/

3.3. Եթե կոնկրետ պատասխան եք մեջբերում

- **Տեքստում Հղում:**

Ըստ ChatGPT-ի պատասխանի (OpenAI, 2023)...

- **Աղբյուրների ցանկում:**

OpenAI: (2023): ChatGPT-ի պատասխան սեպտեմբերի 30, 2023-ին [AI լեզվային մոդել]: Վերցված՝ https://chat.openai.com/

4. Լրացուցիչ նկատառումներ

- **Հեղինակների անունների ձևաչափում**: Միայն առաջին հեղինակի ազգանունից առաջ օգտագործեք «և» կապը:
    - **Օրինակ**: Մարտիրոսյան, Ա., Պողոսյան, Բ., և Սիմոնյան, Գ.
- **Տարեթվի բացակայության դեպքում**: Եթե տարեթիվը հայտնի չէ, օգտագործեք (առանց տարեթվի) կամ (n.d.) անգլերեն տարբերակում:
    - **Օրինակ**: Հարությունյան, Ե. (առանց տարեթվի):
- **Աղբյուրների ցանկի կազմում**: Աղբյուրները դասավորեք այբենական կարգով՝ ըստ առաջին հեղինակի ազգանվան:
- **Տողամիջային հեռավորություն**: Աղբյուրների ցանկում օգտագործեք 1,5 տողամիջյան հեռավորություն, և երկրորդ տողից սկսած կիրառեք կախովի ներգործություն (hanging indent):
- **Ակադեմիական էթիկա**: Արհեստական բանականության մոդելներից ստացված տեղեկատվությունը պետք է հստակ կերպով առանձնացվի և հղում արվի, որպեսզի խուսափեք գրագողությունից:

- **Մեջբերման ոճի համապատասխանություն**: Պահպանեք նույն ձևաչափը բոլոր աղբյուրների համար: